ԽՂՃԻՍ ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Կեանքի այնքան տիղմերով, ի՞նչպէս անցար, իմ աղբիւր,
Ասա՝ ի՞նչպէս ծով հասար, ի՞նչպէս մաքուր մընացիր,
Ո՞նց մընացիր անբասիր, որպէս մանկան սուրբ համբոյր,
Մեղսաղարի փըշերում ծաղիկներըդ ո՞նց բացիր։

Ծաղկածովեր ծընեցիր տատասկահար ճամբեքիդ,
Ինչքան էլ չար նախանձեց քեզ բարին էլ դարակոյր,
Ճահիճուեցին նորերն էլ՝ նախանձելով ակունքիդ, —
Մինչ դու միշտ սուրբ մընացիր, որպէս ներող մօր համբոյր։

Այս անաստուած դարում էլ աստուածային մընացիր,
Հազար նախրի ճամբեզրին սրբակահար աղբրի պէս,
Քեզ պղտորել ցանկացող հազար տիղմի յաղթեցիր՝
Զչեղուեցիր դու քեզնից եւ նըւիրուեց ազգըդ քեզ...

Դու ծաղիկներ չաղ տըւիր՝ ինքըդ ծաղկի կարօտած,
Դարը ձորում... դու դէպի քո լեռն ի վեր գընացիր,
Քո մի գլխին, ողջ կեանքում, հազար սեւ ամպ որոտաց,
Ամպրոպներով էլ անցար, բայց մշտայաղթ մընացիր։

Անանցողիկ ու ծաղկէ ծիածաններ կապելով՝
Զկոտրեցիր ոչ մէկի ծաղկի սիրտն էլ՝ ճամբեքիդ,
Կէս դարն ահա եւ հազար յոյս–մերժումից խաբուելով՝
Մասիսն ի վեր՝ մարդարէ դարձան արցունքդ ու ոգիդ։

Եւ ապշում է աստուածն էլ, որ միշտ անրիծ մընացիր,
Օձի բընի բերանին բըսած բուրող դաղձի պէս,
Աստուածային աղբիւրի նըման ուր էլ գընացիր՝
Միշտ ըմպելի մընացիր եւ չյաղթեց դարն էլ քեզ։

Հազար վշտի խաչուեցիր, բայց մընացիր կենդանի,
Քիչ է մընում՝ Յիսուսին՝ քո յարութեամբ՝ հաւատամ, —
Ա՛խ, չէ, չարը ծով տիղմ է, դեռ աղբիւրներ կը սպանի,
Քեզ սուրբ պահող հըրաշքին քիչ է թէկուզ կեանքըս տամ...

ՑՈՎՀ. ՇԻՐԱԶ

* * *

Սեւան, լոյսդ քեզ է կիզում,
Վանայ ծով է ցամաքդ ուզում,
Հարբում յոյսով մի աչքանի՝
Արփան արփի՞ պիտի ծընի...

Արփան Վանայ ծովն է, ո՛վ կոյր,
Թող իրար գան ծովերը քոյր.
Որ չմընայ այս նորենի
Հայաստանը մի աչքանի։

Մի աչքանի՝ այն էլ՝ աւա՛ղ,
Այսքան ծաղկուն դեղեցկուհի՞ն,
Իմ դեղուհի՞ն վիշապաքաղ,
Իմ Հայաստան աստուածուհի՞ն...

* * *

Ե՞րբ պիտի, աւա՛ղ,
Թշնամիներս քայլեն դլխահակ։

Ե՞րբ պիտի, իղձեր,
Սըլանամ Մասիս թեւերով ես ձեր.

Ե՞րբ պիտի համակ
Տեսնեմ Մասիսի ձիւնն համբոյրիս տակ.

Ե՞րբ պիտի նորից
Վանայ ծով սուզուեմ իմ Վանայ ձորից.

Ե՞րբ պիտի կրկին
Հայոց թագն առնի Մասիսն իր թագին։

Ե՞րբ պիտի հոգիս
Ծայրէ–ծայր գրկէ հողն հայրենիքս.

Ե՞րբ պիտի վերջին
Համբոյրով թաղուեմ Մասիսի լանջին.

Ե՞րբ պիտի վայրաղ
Թշնամիներս ընկնեն ոտքիս տակ...

* * *

Շատ սիրուններ կան՝ շատ սիրուն,
Բայց իմ սիրած եարն ուրիշ է,
Շատ սարեր կան այս աշխարհում,

© National Library of Armenia

Բայց իմ պաշտած սարն ուրիշ է,
Շատ մարգարիտ կայ ծովերում,
Վանայ ծովիս քարն ուրիշ է,
Շատ քընարներ կան՝ շատ սիրուն,
Իմ քընարի լարն ուրիշ է, —
Բանտի մէջ էլ թագը գլխին
Իմ Արարատ սարն ուրիշ է,
Ինչպէս մահըս տամ ոսոխին՝
. . . . . .
Հէյ վա՜խ, աւա՜ղ, դարն ուրիշ է···

* * *

Այնպէս է ժպտում Մասիսն իմ չքնաղ,
Ասես իր առջեւ փըշալար չունի,
Ասես հայ թագ է խոյանքն իր ճիւնի,
Ասես իր պէս չէ իր ազգն էլ, աւա՜ղ:

Մասիսն է մարմինն իմ Հայոց ոգու,
Մասիսն է յաւերժ ողնաշարն Հայոց,
Ողնաշարի ծուծն հայ ոգին է բոց,
Ահա թէ ով է ազգն իմ ահարկու:

Այնպէս խըրոխտ է նա վեր խոյացել,
Որ, ասես, ոտքին էլ շղթայ չունի,
Արեւն էլ, ասես, թագն է իր ճիւնի,
Ասես իր դուռը ոչ ոք չի զոցել:

Ասես չի ըզգում Մասիսն հայ ոգու
Ազգամահ շըշուկն ըսպիտակ վշտի, —
Իրաւ՝ Մաշտոցն էլ, որպէս Արգիշտի,
Մասիսուելու է՝ յաւերժ ահարկու:

* * *

Օ՜, ինչ անգութ է այս դարն անողորմ,
Սակայն՝ հաւատի կանթեղ էր մայրս էլ,
Ես հաւատում եմ, կ'անցնի, որպէս հողմ,
Ես հաւատում եմ՝ կը չքուի այս էլ,
Բոստան կը դընենք Արազից այն կողմ, —
Զէ՞ բոստանչի էր այն կողմում հայրս էլ:

ՅՈՎՀ· ՇԻՐԱԶ

ՀԱՅԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Գ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

ՍԱԼՄԱՍԵԱՆ ԱՐՄԵՆԱԿ· – Հայկական Մատենագիտութիւն· ամբողջութեամբ վերանայուած եւ զգալիօրէն աւելացուած նոր հրատարակութիւն: Երեւան, հրտ· ՀՍՍՀ ԳԱ, 1969, էջ 469:

ԲԱԲԱՑԵԱՆ Բ·, ՍՈՒԼԷՑՄԱՆԵԱՆ Ե· – Աշխատանքի գիտական կազմակերպման փորձից: Երեւան, հրտ· «Հայաստան», 1971, էջ 108:

ԳԱԳԱՐԻՆ ԵՈՒՐԻ ԱԼԵՔՍԵԻԶ, ԼԵՌԵԴԵՒ ՎԼԱԴԻՄԻՐ ԻՎԱՆՈՎԻՉ· – Հոգեբանութիւնը եւ տիեզերքը: Երեւան, հրտ· «Հայաստան», 1971, էջ 244:

ԳՐԻԳՈՐԵԱՆ ԺԻՐԱՑՐ· – Լուռ սրտի խօսքը: Թեհրան, 1971, էջ 48:

ԹՈՓՋԵԱՆ ՍՏԵՓԱՆ ԷՏԿԱՐԴԻ· – Բաֆֆու էսթետիկական հայեացքները: Երեւան, հրտ· ՀՍՍՀ ԳԱ, 1971, էջ 188:

ԻՍԱԵԻ ԷՄԱՆՈՒԷԼ ԱՐՈՆՈՎԻՉ· – Կառավարական արդիւնաւէտութիւնը եւ էլեկտրոնային մեքենաները: Երեւան, հրտ· «Հայաստան», 1971, էջ 52:

ԼԵՆԻՆ ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼԻՑԻՉ· – Սոցիալիստական հայրենիքի պաշտպանութեան մասին: Երեւան, հրտ· «Հայաստան, 1971, էջ 495:

ԼՈՈՒՐԵՆՍ ՈՒ· Լ· – Մարդիկ եւ ատոմներ: Երեւան, հրտ· «Հայաստան», 1971, էջ 375:

ԼՈՒԿԻՆ Ե· Ի· – Կենդանաբանութիւն: Երեւան, հրտ· «Լոյս», 1971, էջ 440:

ՂԱՐԻԲՋԱՆԵԱՆ ԳԷՈՐԳ ԲԱԳՐԱՏԻ· – Կարլ Լիբկնեխտը եւ Ռոզա Լիւքսեմբուրգը Հայ ժողովրդի մասին: Երեւան, հրտ· «Հայաստան», 1971, էջ 67:

ՄԻՐԶԱԽԱՆԵԱՆ ԵՒԳԻՆԷ ԱՐԻՍՏԱԿԻՍԻ· Ուրուագծեր հռոմէական պատմութեան: Երեւան, հրտ· Երեւանի Համալսարանի, 1971, էջ 280:

ՆԱԶԻԿԵԱՆ Ա·, ԽԱՉԱՏՐԵԱՆ Ց· – Հայ գրականութիւնը օտար լեզուներով: Երեւան, Հայկական ԽՍՀ Կուլտուրայի Միութեան հրտ· 1971, էջ 376:

ՊԻՐՍ Զ· – Սիմվոլներ, ազդանշաններ, ազմուկներ: Երեւան, հրտ· «Հայաստան», 1971, էջ 416:

ՍԱՀԱԿԵԱՆ ԱԼԲԵՐԴ ՎԱՂԱՐՇԱԿԻ· – Ագրոնոմական փորձերի արդիւնքների մաթեմատիկական մշակումը: Երեւան, հրտ· «Հայաստան», 1971, էջ 107:

ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆ ՆՈՐԱՑՐ ԲԱԳՐԱՏԻ· – Արեւելեան Հայաստանին միացման պրոբլէմը մինչեղափոխական հայ պատգամաւորութեան մէջ: Երեւան, հրտ· «Հայաստան», 1971, էջ 229:

ՎԱՐԴԱՆԵԱՆ ԼԵՒՈՆ ԵՂԻՇԷԻ· – Մեքենաշինական գործարանների արտադրական կառուցուածքի կատարելագործման ուղիները: Երեւան, հրտ· «Հայաստան», 1971, էջ 188:

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

Իտալիոյ համար 8000 Լիր
Արտասահմանի համար 15.00 տոլար
Մէկ թիւը՝ 2300 Լիր = 4.00 տոլար

Prix de l'abonnement annuel

Pour l'Italie: 8000 Lires
Pour l'Etranger: 15.00 Dollars
Le N°: 2300 L. = 4.00 Dollars

Direzione - Amministrazione - Abbonamenti — Isola di San Lazzaro - 30100 Venezia (Italia) - Tel. 60-104 - Autorizzazione Tribunale di Venezia, 14 genn. 1954, N. 153 del Registro. - Proprietario: Congr. Mechitarista di Venezia. - Direttore responsabile: P. MESROBIO Dr. GIANASCIAN.
Tipografia Armena di S. Lazzaro in Venezia.

© National Library of Armenia